Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 12 -ի N 327 - Ա
որոշման

«ՁԵՌՔԻ ՀԱԿԱՄԱՆՐԷԱԿԱՆ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և հաղթահարման ապահովման նպատակով նախատեսվում է ձեռք բերել 525 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութ՝ 0,95 լ. տարողությամբ, պոմպով, պիտակի վրա «Միայն ՊԲ կարիքների համար» նշումով, որը անհատույց տրամադրվելու է Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Հայաստան համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, բնագավառը՝ առողջապահություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 882,600 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարարություն

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թ. մայիսի 22-ից մինչև 2020 թ. հուլիսի 05-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է ծրագրի իրականացման ժամկետում գնել 525 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութ: Արժեքը՝ 882,600 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	525 հատ ձեռքի հակամանրէական ախտահանիչ նյութերի ձեռքբերում՝ 882,600 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ